

ՍԵՆԵԱԿԻՍ ՄԷՋ ԱՌԱՆՁԻՆՆ...

ՀԱՅԿ ՕՀԱՆՆԷՍՅԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Սինեակիս մէջ առանձինն, կը նիրհէ, թիֆ թափէն գատ, ամէն քան,
Յանախ, լապտերիս լոյսը մարած, խռնչէնքէն ետքը օրում,
Ես կը հսկեմ ցոլեքուն պատուհանէն թափանցող:

Ուրկէ՞ կու գամ այն ատեն քաղցր յուշերը այսօր. . .
Տեսիլները պայծառ, սպիտակ վարագոյրի երկայնքէն
Դէպի ինծի կը սահին նշոյլներու սանդուխէն
Եւ լուսինն ալ անոնց, կը հիւսէ հանդերձանքներ ժանեակէ,
Ուրկէ՞ կու գամ այն ատեն, երազանքներս անուշ:

Լուսինը թեթեւ է, երկնային, եթերական,
Եւ սենեակս կը լեցուի խորհուրդով մը, ու ոչինչ
Կը մնայ մտքիս մէջ անձկութենէն որ իրն էր:

Ուրկէ՞ ինծի կրնար գալ երանութիւնը այսօր. . .

Առաւօտը կը մօտենայ, կը հասնի ժամն ուր կարծես
Մեր մեռելներն սիրելի մեզ կը խօսին գաղտնօրէն,
Խաղաղութիւնն գիշերին կ'ըլլայ այնքան, խոր, այնքան,
Որ կը կարծես ես լսել ձայներ ուրիշ աշխարհէ:

ԱՆՏՐԷ ՏԻԻՄԱ

Թրգմ. Ս. Ե. Մ.

